

ԹՐԱՖԻՔԻՆԳԸ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

2000թ. հոկտեմբերի 14-ին ընդունվել է ՀՀ վարչապետի որոշումը „ՀՀ թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին,,:

2007թ. դեկտեմբերի 6-ին ընդունվել է ՀՀ վարչապետի թիվ 1598-Ն որոշումը „Հայաստանի Հանրապետությունում 2007-2009թթ. ընթացքում մարդկանց շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին,,:

Երեխաների թրաֆիքինգը ծառայում է հետևյալ նպատակներին.

1. Ներգրավում մանկական մարմնավաճառության մեջ,
2. Ներգրավում պոռնոգրաֆիայի մեջ,
3. Որդեգրում է վաճառելու նպատակով,
4. Հարկադրական աշխատանք,
5. Մուրացկանություն,
6. Ներգրավում քրեական գործողությունների մեջ,
7. Օրգանների և հյուսվածքների փոխպատրվաստում:

2008թ.-ից մինչ օրս ՀՀ-ում բացահայտվել է երեխաների շահագործման 15 դեպք: Երեխաների թրաֆիքինգի մեծ մասը գրանցվել է Երևանում: Եղել են դեպքեր, երբ երեխաները մարզերից բերվել են մայրաքաղաք և շահագործման ենթարկվել: Թրաֆիքինգի դեպքերի վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը մշտապես համագործակցում է Ոստիկանության Տավուշի մարզային վարչության անչափահասների գործերով բաժինների հետ: Հաճախակի կազմակերպվում են կլոր սեղաններ, սեմինարներ, քննարկումներ, որոնց մասնակցում են մարզում երեխաների պաշտպանության ոլորտում գործող բոլոր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ